

ՅԵԿՈՂՊԳՅԱՆ և Ս. ԽԱՉԱՅՐՅԱՆ

ԲԱՄԲՈՒԿԵՆՈՒ
ԾԵՐՈՏՄԱՆ ՄԱՍԻՆ



АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
БИОЛОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ — СЕКТОР ГЕНЕТИКИ РАСТЕНИЙ

ГЕВОРКЯН Е. и ХАЧАТРИЯН С.

О ЧЕКАНКЕ ХЛОПЧАТНИКА

ИЗДАНИЕ АрмФАН'a

ЕРЕВАН

1939

N
ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ.—ՀԱՅԿԱԿԱՆ ՅԻԼԻԱԼ
ԲՅՈՒՋԵՎԱՆԻ ԽԵԱՏԵՏՈՒՏ—ԲՈՒՑՈՒՐԻ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՍԵԿՏՈՐ

633.5 : 631.84
գ. 47

Ձեւ ԳԵՎՈՐԳՅԱՆ և Ա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԴԻՇԱՆ է 1961 թ.

ԲՈՒԺԲՈԿԵՆՈՒ ԾԵՐԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅ

Ա 18376
հ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱՐԿԱՆԻ ԱՐՄԱՆԻ

Յ Ե Ր Ե Գ Ա Ն

1939

Տպագրված և ԽԵՆՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Թիւխուն
Նախագտեալության վորաշմանը.

Նախ. սեղակալ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ գաշտերի բերքատվության բարձրացումը բաժբակացան շրջանների կոլտնտեսությունների ամենակարևոր խնդիրներից մեկն է:

Մեր կողմանտեսություններն զգայի հաջողություններ ունեն բամբակենու բերքի բարձրացման գործում։ Տարեցտարի բարերավիրամ և բամբակացան կոլտնտեսությունների հողը, լավանում և մշակությունը, բամբակենու խնամքը, նոր, ավելի բերքատու սորտեր են մուտք գործում մեր շրջանները, լայգանում և սերմացում։

Յեթե 3—4 ամարի սրանից առաջ մեզ մոտ մեկ հեկտարից վեց-յոթ ցենտներ բերքը համարվում եր սոլյուրական, ազա այլը արդեն դա համարվում և ցածր բերք։

1938 թվին Հայաստանի բամբակացան շրջանների կողմանտեսությունները մեկ հեկտարից ստացան միջին հաշվով 16,5 ցենտներ բերք։ Մեզ մոտ 25—30 հ. ավելիի ցենտներ բերքը մեկ հեկտարից արդեն դառնում և սոլյուրական յերեսույթ, իսկ ստախանությական կորտնուեսականները մեկ հեկտարից ստանում են 40—50 ցենտներ և ավելի բերք։

Ստախանությականներն իրենց աշխատանքով ցույց են տալիս, վոր ահսահման են բերքը բարձրացնելու հնարավորությունները։ Այդ գործում աղբոտեխնիկան իարենը դեր ունի։

Ստախանության աղբոտեխնիկան պահանջում է ինամենք դաշտում ամեն մի բույսը, հետեւ ամեն մի բույսի ջրին, հողի փերեցմանը, սնելուն, բուժմանը և այլն։

Առանց չափազանցության կարելի յե ասել, վոր կողմանտեսականների կողմից կիրառվող ամեն մի գիտական միջոցառում պահանջում է բույսերի անհատական խնամք, այսինքն՝ ամեն մի բույսի համար խնամք տանել տուանձին։

Լայգ խնամել բույսերը և սերմացույթ համար նբանցից ընտ-

ըեւ, առանձնացնել ամենալավերը —ահա բերքի բարձրացման ամենաճշգույտը:

Կոլտնտեսականները բույսի անհատական խնամքը դարձնելով աշխատանքի գլխավոր ձեռ ու ճանաչելով բույսի զարգացման որենքները, հնարաւորություն կունենան բույսերի զարդացումը դեկավարել այնպես, ինչպես այդ պէտք է նրանց բերքը բարձրացնելու համար:

* * *

Ամեն տարի կոլտնտեսականները բամբակի հնուու դաշտում տեսնում են, թե ինչպես բույսերից թափովում են մեծ քանակությամբ կոկոններ, ծաղիկներ և գեռ չհասունացած, յերիտասարդ կնդուղներ: Այս յերեսութիւն առանձնապես մեծ չափերի յեւ հասնում պարասոս ամսի սկզբներին, յերբ ուրբաքանչյուր բույսոց ամս առանյակ կոկոններ, ծաղիկներ ու կնդուղներ թափում են դեռին: Բամբակենու բույսի վրա սովորաբար մնում են 5—6 կտմ յերեմն մի քիչ ավելի կնդուղներ: Բույսի զարդացման ամբողջ շրջանում թափովում եւ առաջացած կոկոնների, ծաղիկների մոտ 70—80%-ը:

Զեան բամբակի այնպիսի սորտեր, վորոնք ծաղկավիճում և պաղաթափում չունենան, թեպետ տարրեր սորտերի մոտ և աղբոտեխնիկայի տարրեր պայմաններում այդ յերեսությը հասնում է տարրեր չափերի:

Ինչ խոռը, վոր ծաղկավիճման ու պաղաթափման այսպիսի մեծ չափերի հասնելն զգալիորեն պակասեցնում է բամբակենու դաշտի բերքատվությունը: Յեթե կարողանայինք ամենափոքր չափով անդամ պակասեցնել ծաղկավիճումն ու պաղաթափումը, ապա դրանով իսկ բարձրացրած կլինելինք բամբակենու բերքատվությունը: Բացի սրանից, պակասեցնելով պաղաթափումը, բույսերի վրա կարահպաններինք ամենից առաջ գոյացած կնդուղները, կաբագացնելինք բամբակենու հասունացումը, և մինչև աշնան ցրտահարություններն ավելի շատ ու վորակով բերք կհավաքելինք:

Մեծ են այն ողուանները, վոր բամբակացան կոլտնտեսությունները կարող են ստանալ պաղաթափման դեմ ուղղված պայքարը հաջող կազմակերպելու դեպքում: Ահա թե ինչու և՛ դիտության բնագավառում աշխատողները, և՛ բամբակագործ գյուղացիները վազուց իվեր հետաքրքրվել են այն հարցով, թե

ինչի՞ց են առաջ դալիս բամբակենու ծաղկավիճումն ու պաղաթափումը և ինչպես կարելի յէ պայքարել դրանց զեմ:

Գիտական կանոնները շատ իրարձեր և ուսումնասիրություններ են կառարել այս ուղղությամբ, բայց, չնայած այն բոլոր բացատըստիւմներին, վոր նրանք տվել են ծաղկավիճման ու պաղաթափակման վերաբերյալ, այնուամենայնիվ նրանց չի հաջող-վել գործնական միջոցներ գործել բամբակենու դաշտում պատղաթափումը պակասեցնելու համար:

Յեզ միայն 1936 թվին, Աղեսասայի Աելեկյանը Գենեռիկական բնագիտությամբ, մէր յերկը ականավոր դիտնական, ակադեմիկ Տրոֆիմ Դենիկոսլիչ Լիսենկոն ճիշտ կերպով բացատրեց բամբակենու ծաղկավիճման ու պաղաթափակման պատճառները:

Ակադեմիկ Տ. Գ. Լիսենկոն մէխաժանուակ ցայց տվից պաղաթափումը պակասեցնելու և բամբակենու բերքատվությունը բարձրացնելու կարևոր միջոցներից մեկը՝ բամբակենու ծերատումը:

ԲԵՐԻՑ Ե ԱԹԱՋԱՆՈՒՄ ԲՍՄԲՍԿԵՆՈՒ ՊՏՂԱԹԱՓՈՒՄԸ

Հետեւելով բույսերի զարգացմանը, դժկար չե նկատել, վոր ինչպես բոլոր բույսերի մոտ, այնպես ել բամբակենու մոտ, բույսի տարբեր մասերը միատեսակ՝ չեն զարդանում և հավասարաչափ արժեքավոր չեն պաղատվության համար:

Բամբակենու վրա սովորաբար լինում են յերկու տեսակի ճյուղեր՝ բերքատու ճյուղեր, վորոնք կոչվում են սիմպոդիաներ և վոչ-բերքատու ճյուղեր, վորոնք կոչվում են մոնոպոդիաներ (տե՛ս նկ. 1*):

Վոչ-բերքատու ճյուղերը (մոնոպոդիաները) առաջանում են չերիաբերեներից հետո, դիմավոր ցողունի 2—3-րդ տերեածոցից: Բերքատու ճյուղերն առաջանում են 4—5-րդ տերեածոցից: առաջին բերքատու ճյուղը կամ առաջին կոկոնը յերելաբուց հետո հաջորդաբար առաջանում են մյուս բերքատու ճյուղերը:

* Դեկանի վերցված են ակադեմիկ Տ. Գ. Լիսենկոյի և Ա. Ա. Ավագյանի “Արքանք Խօռոչանակ” դրույտ:

Յուրաքանչյուր տերևածոցում լինում են մի քանի բողբոջներ, վորոնցից սովորաբար աճում և զարդանում է մեկը, մյուսները մնում են քնած վիճակում և, նայած բամբակինու աճման պայմաններին, նրանք կարող են զարգանալ, առաջացնելով բերքատու կամ վոչ-բերքատու յերկրորդական ճյուղեր:




Նկ. 1. Բամբակինու կազմաբանը: Օ—շաքիլային տերեներ. 1, 2, 3, 4 և 5—զետավոր ցողունի խոկական տերեներ. ո—աճման բողբոջներ. թ—աճման ճյուղ, 6—1-ին կոկոնը 1-ին բերքատու ճյուղի վրա, 8—բույսի դադարք:

Վոչ-բերքատու ճյուղերն իրենց կտրմութեամբ տարրերվում են բերքատու ճյուղերից. նրանք նման են գլխավոր ցողունին,

նրանցից յուրաքանչյուրի ծայրը վերջանում է տերևով կամ ծայր-
բարողով ծով, ինչպես և բույսի գաղաթը: Վոչ-բերքատու-
մաւզերը բուռն կերպով աճող որդաններ են, սրանց վրա առա-
ջանում են շատ քիչ թփով կոկոններ, վորոնք մեծ մասամբ
չեն հասունանում:

Բերքատու ճյուղերն առաջանում են տերևաբողբոջից, նրանք
ծնկածե են, յուրաքանչյուրի ծայրը վերջանում է կոկոնով (տե՛ս
նկ. 2):

Վոչ-բերքատու ճյուղերի թփով սովորաբար լինում է 1—2,
իսկ առանձին դեպքերում՝ 3—4:



Նկ. 2. Յամբակենու բերքատու (սիմպոդիա) նյուղը.

Հասկանալի յե, վոր ինչքան վաղ և կաղմակերպվում բամ-
բակենու առաջին կոկոնը, կամ առաջին բերքատու ճյուղը,
այնքան ամելի վաղ են հասունանում նրա կողուղները:

Յեթև հետեւնք բամբակենու կյանքին, կտեսնենք, վոր նրա
որդանների տարրերը մասերն աճում են տարրեր արագու-
թյամբ. հայտնի յե, վոր բույսի գլխավոր ցողունի գաղաթն ա-
վելի արագ և աճում, քան ստորին ճյուղերը:

Վորքան արագ և ուժեղ են աճում բույսի առանձին մասերը, այնքան ավելի շատ ջուր և սննդանյութեր են սպառում նրանք. հետեազես, ջրի և սննդանյութերի հոսանքն ավելի ուժեղ և լինում դեպի այդ մասերն ու որգանները:

Այստեղից հասկանալի յէ, վոր բույսի առանձին մասերի աարբեր գարդացումն ու ածումն առաջ են բերում սննդանյութերի անհամասար բաշխում նրա մեջ, բույսերին որիցող սննդանյութերի դդալի մասը կլանում է դադաթը, վորի հետեանքով սոսորին ճյուղերի վրա կաղմավորվող կոկոնները, ծաղիկները և յերկտասարդ կնդուղները դրկվում են անհրաժեշտ սննդից:

Այս յերեւույթը շատ սպարզ նկատվում է այն ժամանակ, յերբ առանձին բույսեր կամ բամբակենու ամբողջ դաշտեր, սննդանյութերի խիստ առասության հետեանքով, հոսանում են: Նման դեպքերում բամբակենին ուժեղ աճում է, ձգվում, վերին ճյուղերի վրա առաջանում են մեծ թիվով կոկոններ, ծաղիկներ և կնդուղներ, վորոնք, իրենց հերթին, ուժգացնում են սննդանյութերի հոսանքը դեպի այդ որդանները, և բամբակենու ամենից առաջ գոյացած ծաղիկներն ու կնդուղները մատնում են քաղցի, վերջիններս սննդանյութերի սպակասության ոլատ-ճառով թուլանում են և զգալի չափով թափակում:

Բամբակենու հոսացած դաշտում, բույսերի բուռն աճման պատճառով, ուշանում է հետագա կնդուղների հասունացումը, ինդուղների մի դդալի մասը մինչև աշնան ցրտահարությունները չի բացվում, ցրտահարվում եւ ու փչանում: Այդպիսի դաշտերի բերքատվությունը շատ ցածր և լինում, իսկ ստացված բերքի վորակը՝ վատ:

Սննդանյութերի անհամասար բաշխումը և դրա հետեանքով բույսերի վրա առաջացած կոկոնների, ծաղիկների ու կնդուղների քաղցը— առա ծաղկավիճման ու սլտղաթափման դիմավոր պատճառները:

Ակադեմիկ Տ. Դ. Լիսենկոն տալով սլտղաթափման պատճառների այս բացարությունը, միաժամանակ ցույց տվից, վոր յեթե բամբակենու վոչ-բերքատու ճյուղերը ժամանակին հետացվեն և բույսի գաղաթը ծերատվի, ապա տեղի կունենա սննդանյութերի վերաբաշխում:

Զուրը և սննդանյութերն այս անդամ կղործադրվեն վոչ թե
գաղաթի աճման, ուշացած ճյուղերի, կոկոնների առաջացման
և վոչ-բերքատու ճյուղերի սննդան համար, այլ ջրի և սննդա-
նյութերի հսկանքը կուղղի դեպի մեզ համար անհրաժեշտ բեր-
քատու ճյուղերը։ Այդ ճյուղերի վրա սննդանյութերի պակասը
կմերանա և կողականի պաղաթափումը։

ԲԱՄԲԱԿԵՆՈՒԻ ԾԵՐԱՏՈՒՄՆ ՍՏՈՒԳՎԱԾ ՄԻՋՈՅ Ե

Ակադեմիկ Տ. Դ. Լիսենկոյի մեթոդով կատարվող՝ բամ-
բակենու ծերատումն իրեն վաղուց արգարացրել և և դրանում հա-
մարդկան կուտանտեսական մասսաները։ Արդեն 1936 թվին նոր բամ-
բակացան շրջանների (Աւկրաինայի, Ղրիմի և այլն) կոլտնտեսու-
թյունները բամբակենու ծերատումը կատարեցին մոտ 75.000
հեկտարի վրա, իսկ հետագայում այդ տարածություններն ավել-
լի ընդարձակվեցին։

Աղեսայի Սելեկցիոն-Գենետիկական ինստիտուտի տվյալ-
ներով՝ բամբակացան նոր շրջանների պայմաններում բամբակե-
նու ծերատումը մեկ հեկտարից միջին հաշվով տալիս է 1—1,5
ցենտներ ավելի բերք, իսկ լավ մշակելու դեպքում բամբակենու
ծերատումից ստացվող բերքի հավելումը հաճախ հասնում է
մինչեւ 4—5 և ավելի ցենտների։

Աւկրաինայում և այլ բամբակացան շրջաններում կատարված
փորձերը ցույց են տվել, վոր բամբակենու ծերատումն ավել-
լացնում է մինչև ցրտահարությունները հավաքվող բերքը. այդ-
ուղի յև ունենում բամբակենու ավելի արագ հասունացման ու-
կնուղների բացման հետևանքով։

1938 թվին Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆե-
կուլտետի համար կան ինստիտուտն ուժանդակեց մեր կոլտնտեսու-
թյուններին՝ ազգությունների միջոցով բամբակենու ծերատման
մասսայական փորձեր կազմակերպելու։ Փորձերը գրվեցին Հոկ-
տեմբերյանի, Վաղարշապատի, Ղամարլոյի, Վեդիի և Զան-
դիքսարի շրջանների կոլտնտեսությունների մոտ 150 ողակնե-
րում։

Ինչպես և սպասվում եր, այդ մասսայական փորձերը մի
անդամ ևս ցույց տվին, վոր բամբակենու ծերատումը բարձրաց-
նում է բերքատվությունը, լավացնում ե բերքի վորակը և շա-
տացնում է մինչեւ ցրտահարությունները հավաքվող բերքի քա-
նակը (աե՛ս № № 1 և 2 աղյուսակները)։

Բամբակին ծերաբնան պայլունինին լստ սնասկնելի և բամբական 2րշանինի (1938 թ.)

| Ծրջանի անուն | Մեկ հեկտարի բերքը (քիլոներով) | | | Ընդունակություն (ցենտր) | | |
|---------------|-------------------------------|--------------|--------------|-------------------------|-----------|-------|
| | 1-ին փառինստ | 2-րդ փառինստ | 3-րդ փառինստ | առաջնական | առաջնական | իս-% |
| 1. Վաղոպատ | 7 | 10.5 | 21.65 | 18.0 | 3.65 | 21.86 |
| 2. Ղամբուրուս | 7 | 10.5 | 21.0 | 20.13 | 3.87 | 22.24 |
| 3. Վեղը | 4 | 6.0 | 25.42 | 22.07 | 3.35 | 24.92 |
| 4. Հոգածելինը | - | 18 | 27.0 | 23.7 | 20.0 | 23.0 |
| 5. Հոգածելինը | 1306 | 8 | 12 | 25.48 | 22.51 | 2.97 |
| 6. Վաղոպատ | 915 | 6 | 13.5 | 18.95 | 17.12 | 1.88 |
| 7. Վաղոպատ | 915 | 31 | | | | |
| 8. Վաղոպատ | - | | | | | |
| 9. Վաղոպատ | 52.5 | 22.71 | 19.88 | 2.83 | 23.46 | 20.4 |
| 10. Վաղոպատ | - | | | | | |
| 11. Վաղոպատ | 35 | | | | | |
| 12. Վաղոպատ | 3.06 | | | | | |
| 13. Վաղոպատ | 21.19 | | | | | |
| 14. Վաղոպատ | 1.53 | | | | | |
| 15. Վաղոպատ | 22.47 | | | | | |
| 16. Վաղոպատ | 19.98 | | | | | |
| 17. Վաղոպատ | 2.49 | | | | | |
| 18. Վաղոպատ | 12.5 | | | | | |
| 19. Վաղոպատ | 16.61 | | | | | |
| 20. Վաղոպատ | 5.86 | | | | | |

№ 0246 տեսակի մինչ-ցրտահարությունը հավաքված բերքը

| Տարածութ. (Հեկտար- ներով) | Հումույթի բերքը 1 հեկտ. (ցենտներով) | | | | | | | | |
|---------------------------------|-------------------------------------|---|----------|-------|------|-------|-------|-------|---|
| | Մինչև ցրտա- հարութ. հավաքված | Ցրտահարու- թյունից հե- տո հավաք- ված | Բնդամենը | Ցենտ. | % | Ցենտ. | % | Ցենտ. | % |
| Մերատպած . . . | 7,5 | 19,3 | 119,1 | 3,6 | 94,7 | 22,9 | 114,5 | | |
| Զեհրատպած . . . | 7,5 | 16,2 | 100 | 3,8 | 100 | 20,0 | 100 | | |

Բարբակենու ծերատման բնադրավառում Բիոլոգիական ինստիտուտի կողմից կազմակերպված մասսայական փորձերը վս'չ միայն պետք է ցույց տային այդ միջոցառման ողտավետությունը բերքի բարձրացման դորժում, այլև պիտի պարզելին, թե մեղ մոտ մշակվող բամբակենու տարրեր սորտերի զարդացման վս'ը ըրջանում և ի՞նչպես պետք է կատարել ծերատումը:

Հայաստանի պայմաններում ուժեղ պաղպաթափում և ունենում բամբակենու № 915 սորտը՝ այդ յերեսույթն ավելի պակաս չափով նկատվում է նաև մեղանում ամենից շատ տարածված № 0246 սորտի մոտ. ուժեղ սննդի պայմաններում այդ սորտի բռնյակերը հաճախ հոռանում էն, սկսում են ձգվել, նոր ճյուղավորումներ տալ, ուշ են պաղպաթալում և ժամանակին չեն հառաւնանում. աշնան վաղ ցրտահարությունների դեպքում նրանց վրա շատ քիչ թփով կնդուղներ են բացվում, հետեւապես բերքը պարկասում է. բամբակենու № 0246 սորտն արժեքավոր և բարձր բերքատվություն ունեցող սորտ է, նրա պաղպաթափումը պակասեցնելի և հասունացումն արագացնելը տնտեսական մեծ նշանակություն ունի:

Հոռացման յերեսույթը յերեմն նկատվում է նաև բամբակենու № 915 սորտի մոտ:

Մասսայական փորձերը ցույց տվին, վոր ծերատումը, վորպես պաղպաթափման և հոռացման դեմ պայքարելու աղբուծունարկությունը մեկը, հատկապես մեծ նշանակություն ունի մեղ մոտ մշակվող № 915 և № 0246 սորտերի համար:

Ծերաստումից հետո բամբակենին ուժեղանում և պաղաթափակումը պակասում է: Մեր փորձերը ցույց են տվել, վար հառանացով կնդուզի քանակին ամեն մի բարեփ վրա 2—3 հատով ավելանում է, յուրաքանչյուր կնդուզի քաշը 0,3—0,5 գրամով մեծանում է, ընդհանուր բերքի ավելացման հետ միասին շատանում է նաև մինչեւ ցրտահարությունները հավաքվող բերքի քանակը:

Ինչպես արդեն տեսել ենք, բամբակենու ծերաստումն ավելի մեծ արդ լունք և տալիս այն ժամանակ, յերբ բույսերն ապահոված են ջրով, հանգային և որդունական սննդանիւթերով, ժամանակին կատարվող նորացմամբ և, ընդհանրապես, բարձր աղբանակներայիւմ:

Յեթե ծերաստման հետեանքով բերքի հավելումը մեկ հեկտարին միջին հաշվով կազմում է 1,5—2,5 ցենտոներ (աե՛ս № 1 աղբանակը), ապա առանձին սոսախանութեական ողակներում այն համնում է մինչեւ յոթ ցենտոների (աե՛ս № 3 աղբանակը):

Հայաստանում բամբակենու ծերաստման դործում ամենից քիչ ուսումնասիրված հարցը— դա այն եր, թե բույսերի զարդացման վո՞ր շրջանում պետք է կատարել ծերաստմը:

Մեր պայմաններում բամբակենին, նայած մշակվող սոբանին, տալիս է 15—18 պալատու ճյուղեր: Յերբեմն ճյուղերի թիվը համնում է մինչեւ 20-ի և ամելի: 1938 թ. փորձերի ժամանակ ծերաստմը կատարված է յեղել 10-րդ, 12-րդ և 14-րդ բերքատու ճյուղերի առաջնալուց հետո: Ծերաստմը կատարելու այս յերեք գեղագում ել ստացվում է բերքի հավելում, ինչպես այդ ցույց և արված մեր աղբանակներում:

Սակայն բերքի հավելումը կատարվում է տարբեր չափով, նայած թե վո՞ր բերքատու ճյուղերից հետո յե կատարվում ծերաստմը:

Ամենից լավ է, յերբ բամբակենու № 0246 սորտի բույսերը ծերաստվում են 10-րդ բերքատու ճյուղից հետո, № 915 և «Երեղեր 1306» սորտերի մոտ՝ 10—12-րդ ճյուղերից հետո (աե՛ս № 1 աղբանակը):

Բամբակենու զարգացման այլպիսի վիճակ լինում է ժողովրդապես հուլիսի 20-ից մինչեւ սղոսասնի 5-ը, այսինքն՝ ծերաստման աջնատանքները զուղազիւսում են բույսերի մասսայական ծաղկման շրջանին:

Առ կատարվող ծերաստմնանույնություն է, իսկ վաղ ծերաստման

յուղիուս Սիրոս Աստվածականքի Կորումը Եկատերինա

հետևանքով շատ հաճախ ոլլիսայլոր ցողունի տերեածոցից դարգանում են յերկրորդական, նոր վոչ-բերքատու ճյուղերի Այդ նոր առաջացող վոչ-բերքատու ճյուղերն աճում են, ձգվում: Բերքատու ճյուղերի վրա ավելի քիչ քանակությունը կնդուղներ են հասունանում, և բերքը լինում է ավելի քիչ, քան չերպարզած բամբարկենու մոտ:

Այսակից պարզ է, թե վո՛րքան կարենը և բամբարկենու ծերատումը ժամանակին և ճիշտ կատարելը:

Ի՞՞ՉՊԳԵՐ ԾԵՐԱՏԵԼ ԲՈՄԲԵԿԵՆԻՆ

1. Նախքան ծերատումը, բամբարկենու մատղաշ հասակում, պետք է հեռացնել նրա վրա առաջացած բոլոր վոչ-բերքատու (մոնոպոլիալ) ճյուղերն ու բոլոր չներկայացները:

Ծերատումն առանց այդ ճյուղերը հեռացնելու վո՛չ միայն սկսակար չե, այլև վնասակար է:

Վոչ-բերքատու ճյուղերի հեռացումը պետք է սկսել այն ժամանակ, յերբ գաշտումը բռնյակի 60—70%-ի վրա արդին առաջացել են 3—4-րդ բերքատու ճյուղերը, կամ, ավելի ճիշտ, յերբ լավ տեսանելի յեն գառնում առաջին կոկոնները:


Յուրաքանչյուր 3—4 որում բամբարկենու վրա առաջանում է մեկ բերքատու ճյուղ; և յեթե մենք մոնոպոլիաների հեռացումն սկսում ենք 3—4-րդ բերքատու ճյուղերը յերեալուց հետո, առաջա մինչև 6—7-րդ ճյուղերի կազմակերպվելը պետք է ավարտել այդ աշխատանքը: Այդ ժամանակը համապատասխանում է մոտավորապես հունիսի 15-ից մինչև հուլիսի 5-ը ժամանակաշրջանին, կամ կոկոնակարգան սկսելոց մինչև առաջին ծաղկենների յերեալը (ծլելուց 40—45 որ հետո):

Վոչ-բերքատու ճյուղերը պետք է հեռացնել հետեւալ կերպ. չափ ձեռքով պետք է բանել ոլլայլոր ցողունի առաջին բերքատու ճյուղը կամ առաջին կոկոնը և աջ ձեռքով վերեկից ներքեծ ձեռքի ընդհանուպ շիտումով հեռացնել նրանից ներքեծ դաշտով բոլոր աճող ճյուղերն ու բոլոր չներկայացները՝ տերենների հետ միասին (տե՛ս նկ. 3):

Այս աշխատանքը կատարելու ժամանակ պետք է խուսափել բռնյակ ցողունը պլոկելուց, վոր սովորաբար տեղի յեւ ունենում: յերբ վոչ-բերքատու ճյուղերի հեռացումն ուշացնում ենք, և նրանք ամբանում են:

Ցեւք այլ ճյուղերն արդեն բավականաշատ ամբացել են, ավելի լավ և զբանք հեռացնել վոչ թե ձեռքի՝ վերելց ներքե կառարիսը շփումով, այլ բութ մատի և ցուցամատի միջնորդ այդ ճյուղերն զգույց հրել դեպի աջ կամ ձախ:

2. Վաշրեթքառ ճյուղերի հեռացումը՝ 20—30 որ հետո պէտք և ակնել բամբակինու ծերատման աշխատանքները:



նկ. 3.

Գլխավոր ցողունի ծայրի հեռացումը կամ ծերատումն անհրաժեշտ և կատարել հետեւալ կերպ. ձախ ձեռքով բռնել այն աներեւ, վորի ծոցում դանիլում և ներքելց հաշված 10-րդ կամ 12-րդ ճյուղը (կոկոնը), իսկ աջ ձեռքի յերկու մասով բռնել պիտաղոր ցողունի ծայրը, վորը վնրչին փոքր տերենի հետ միասին կարգում և մնացող կոկոնից վերել (տե՛ս նկ. 4): Ծայրը հեռացնելու ժամանակ բամբակինու ցողունը պլոկելուց հուսափելու համար անհրաժեշտ և ծայրը կորել այնպէս, վոր կտրված ծայրի մակերեսը գտնովի մնացող կոկոնի հետ մեկ մա-

կերեսոյթի վրա, վորը հետաղայում բռնում և զվաճավոր ցող դռնի ծալրի տեղը:

Միհնույն ժամանակ պետք է աշխատել ծերատման ժամկետն անց չկացնել, ծալրը խորը չկտրել, կտրելու ժամանակ այն դեպի ներքեւ չկտրել, ոյլ բույր մասով հրել դեպի մի կողմ:



նկ. 4:

Ծերատումն առաջին հերթին պետք է սկսել այն հողամասերից, վորտեղ ցանքը կատարվել է ավելի վաղ, վորտեղ բույրի աճեցողությունն ավելի առաջ է և վորտեղ վոշ-բերքատու (մօնոպոդիաների) հեռացումը կատարվել է ավելի չուտ:

Ծերատման աշխատանքները պետք է սկսել, յերբ ովլյալ հողամասում բույսերի 40—50%-ի մըր արդեն առաջացել են 10—12-րդ բերքատու ճյուղերը և, վորքան հնարավոր են, կտրե-

ժամանակում ավարտել։ Զարդացմամբ հետ մնացող բույսերը
պետք ե ծերատել վերջին ժամկետներում։

Հետագայում առաջացած յերկրորդական վոչքերքատու
ճյուղերն անհրաժեշտ ե հեռացնել։

Աշխատանքի տեխնիկային ափառողեակուց հետո բաժրակենու
ծերատման աշխատանքները գժվար չեն թվա կոլոնտեսականնե-
րին։ 6—8 կոլոնտեսականներ մի որում կարող են մեկ հեկտարի
վրայից հեռացնել բամբակենու վոչքերքատու ճյուղերը, իսկ
4—6 կոլոնտեսականը՝ կատարել բամբակենու ծայրերի (զա-
դաթների) հեռացումը մեկ հեկտարի վրա։

Կոլոնտեսությունները պետք ե հաշվի առնեն բամբակենու
ծերատման դործով զրագվող կոլոնտեսականների աշխատանքի
արտագրողականությունը՝ համապատասխան չափով նրանց վար-
ձատըելու համար։

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ա Ւ Թ Յ Ա Ւ Ն

62

| | |
|--|----|
| Բամբակենու . ծերաստման մասին | 5 |
| Բնչքոց և առաջանում բամբակենու պաղպաթափումը | 7 |
| Բամբակենու . ծերաստումն ստորգված միջոց և | 11 |
| Ի՞նչպես ծերաստել բամբակենին | 16 |

17/39

Պատ. Խմբագիր՝ Գ. ԲԱԲԱՅԱՆՅԱՆ

Կոհենրու սրբագրիչ՝ Ռ. ՏՈՆՅԱՆ

Տել. Խմբագիր՝ Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հանձնված ե արտադրության 22/VII. 1939 թ.,

Ստորագրված ե տպագրելու 3/VII. 1939 թ.,

1½ տպ. մամ., 1 մամուլում 38.400 տպ. նիշ.

Գլավլիստի լիսպոր № Ն. 2864, Հրատ. № 43,

Տիրաժ 2000, պատվեր 459, գինը 60 կ.

«Խորհրդային Հայաստան»-ի Հրատարակչության տողարան:

Տօ. 1940 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008604

A-II
18376

ԳՐԱԴԱՐԱՆԸ ՀՕ ԿՈՊ.

18376

Տ 603